

**Տ. ՄԱԿԱՐ ԱՔԵՂԱ ՆԱԿՈՒՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(25 հուլիսի 2004 թ.)

*«Զգոյշ լնորք, մի արհամարհիցէք
զմի ի փոքրկանցս յայցանէ»:
(Մարթ. ԺԸ 10)*

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Նոգոյն Սրբոյ. ամէն»:

«Զգոյշ եղեք, որ այս փոքրիկներից մեկին չարհամարհեք»։ Այս բնաբանը վերցրել ենք այսօր Սուրբ Պապարագի ընթացքում ընթերցված Ավետարանից, որպեսզի պարմվում է Կորուսյալ ոչխարի առակը։ Մի մարդ հարյուր ոչխար ուներ։ Կորցնելով մեկին՝ թողեց իննսունինը և գնաց այդ մեկի հետևից։ Եվ ո՞վ է այն մարդը, որ այդպես չէր վարվի, եթե իր հետ նմանարիկ մի դեպք պարահեր։

Սիրելի հավաքացյալներ, մեր հայրերի մեկնություններում այս առակը մեկնաբանվում է այսպես. Նովիվը Տերն է, իննսունինը ոչխարները՝ դրանք ինը դասերի հրեշտակներն են, իսկ մեկը՝ Ադամը, որ Տերը, գթալով նրան և նրա սերունդներին, եկավ փրկելու, անկյալ վիճակից բարձրացնելու։ Այս առակում փրկությանը զուգահեռ Փրկիչը շեշտը դնում է ողորմության, մարդասիրության մեծ և առաքինի գործերի վրա։

«Զգոյշ լնորք, մի արհամարհիցէք զմի ի փոքրկանցս յայցանէ»։

Նիսուս երբեմն սպառնալիքով, երբեմն խրապելով մեզ ասում է՝ մի արհամարհեք փոքրերին, և փոքր ասելով Քրիստոս նկարի չունեի քարիքով փոքրերին, այլ նրանց, ովքեր աղքատ էին, ովքեր արհամարհված էին մարդկանց կողմից, սակայն Աստուծո մոտ նրանք ոչ թե անժանոթ էին, այլ՝ ճանաչված։ Դրա համար էլ Տերը ասում է՝ մի՛ արհամարհեք, այսինքն՝ մի՛ նախապրեք, մի՛ ծաղրածանակի ենթարկեք և ողորմությունից մի՛ զրկեք նմաններին, ինչպես որ անում էին փարիսեցիներն ու մաքսավորները։

Սիրելի հավաքացյալներ, առաքինության շատ քննակներ կան, որ մեզ բարձրացնում են Աստուծո մոտ և դարձնում արքայության ժառանգորդներ։ Սակայն մեզ Աստուծո նման դարձնող ուրիշ առաքինություն չկա, բան ողորմությունը։ Սա նույն ինքը՝ մեր Տեր և Փրկիչ Նիսուս Քրիստոս հայրենից՝ ասելով՝ նմանվեք ձեր երկնավոր Նորը, ով Իր արեգակը ծագեցնում է չարերի ու բարիների և անձրև բերում արդարների ու մեղավորների վրա։

Մի մեծահարուստ մարդ երեք շատ մեծ սիրելիներ ուներ, սակայն երեքից երկուսի հետ ավելի հաճախ էր խնջույք կազմակերպում և ուրախանում։ Մի օր հանկարծ եկավ թագավորը և կանչեց այդ մեծահարուստ մարդուն, որպեսզի դարի նրան, և նա ընկավ վախի, սարսափի մեջ և դիմեց իր սիրելիներից առաջինին, որպեսզի օգնի իրեն, սակայն առաջին սիրելին պարասխանեց նրան ու ասաց. «Ով մարդ Աստուծո, ես քեզ շատ եմ հարգում և քո համար ամեն ինչ կանեմ, բայց այդ թագավորը գորեղ է, և ես ոչնչով չեմ կարող օգնել քեզ»։

Այս մարդը այնուհետև դիմեց իր երկրորդ սիրելիին՝ իրեն օգնելու համար, սակայն նա էլ պարասխանեց այսպես. «Ես քո սիրելին եմ, և դու էլ իմ լավ բարեկամը, ցավոք, ես քո համար ոչինչ անել չեմ կարող, որովհետև այդ թագավորը շատ արդարադատ և հզոր է: Ես քեզ կարող եմ միայն մինչև իր պալատի դռան մոտ փանել, նրանից ես վախենում եմ և չեմ կարող նրա առջև բարեխոսել քեզ համար»:

Այս ամենից հետո նա դիմեց երրորդին: Երկմտելով գնաց նրա մոտ և օգնություն խնդրեց: Այս երրորդն ասաց. «Ես կգամ քեզ հետ պալատ և եթե հարկ լինի, անգամ իմ կյանքը վրանգի ենթարկելով՝ կբարեխոսեմ քեզ համար թագավորի առջև»:

Սիրելի հավաքացյալներ, մարդու առաջին սիրելին այս աշխարհն է իր ուրախությամբ և նյութեղենով: Երբ մարդը ավանդում է հոգին, այդ ամենը լքում են նրան: Երկրորդ սիրելին մենք ենք՝ հարազատները, որ նրա մահանալուց հետո ուղևեցում ենք նրան մինչև գերեզման, այսինքն՝ թագավորի պալատի դռների մոտ, իսկ թագավորը՝ Բրիսպոսն է, որ դադարելու է արդարորեն ողջերին և մահացածներին:

Երրորդ սիրելին մարդու կապարած ողորմությունն է, որ մարդուն դարձնում է Աստվծո նման և դարաստրանի ժամանակ պարզակապ կանգնեցնում Բրիսպոսի առջև: Ահա, այս ամենը իմանալով, չանմարանաք խելագարների պես, այլ իմաստուն գրավենք մեր կյանքում և Աստվծուց մեզ փրկած հարսությունը նրան վերադարձնենք:

Աշխարհում չկա մի բան, որ մեզ համար ավելի օգտակար լինի, քան աստվածային երկյուղն ու ողորմածությունը, որովհետև դարաստրանի օրը Տերը նայելու է ոչ թե մեր խոսքերին, այլ՝ գործերին. փալ մի կտոր հաց և փոխարենը մեղքերի թողություն ստանալ, մի բաժակ ջուր փալ և աստվածային աղքտության ըմպել, զգեստ հագցնել և փոխարենն արժանանալ առաջին լուսեղեն պարմունանին:

Մյուս առաքինությունները ճրագ են, իսկ ողորմությունը՝ ձեթ, ուստի ով ձեթ չունի, ինչ օգուտ նրան դարարկ ճրագից: Հիմար կույսերն էլ անմրացան և փեսայի գալստյան ժամանակ մնացին արտաքին խավարում: Այդպես էլ մենք, եթե դույզն-ինչ չունենք ողորմածության գիտակցությունը մեր անձերից ներս, դարաստրանի օրը կմնանք հավիտենական խավարում: Ուրեմն, փութանք բարիք գործել մեր կարողությունների ներածին չափով, չանտեսենք աղքատին, անկյալին հետևենք: Բարի սամարացին, գթալով, իր կարողությունների չափով օգնեց վիրավորին, մենք էլ ջանանք օգնել մեր դիմաց գրավող կարիքավորներին, որպեսզի ազատվենք չարիքից, որպեսզի մաքրվենք մեղքերից և ողորմածությունը մեզ համար դարձնենք ոչ թե արտաքին մի բան, ձեռքբերովի կամ ստիպողական պարգամ, այլ ներքուստ փոխող հոգևոր վիճակ և բարի առաքինություն:

«Շնորհք, սէր, խաղաղություն եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեկսանայ. ամէն»: